Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
ապրիլի 1-ի N 464 - Լ որոշման

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Աղբահանություն

Նպատակ՝ Աղբահանության կայուն և ինտեգրված արդյունավետ համակարգի ներդրում

Խնդիր՝ Հանրապետության բոլոր համայնքներում աղբահանության ծառայության մատուցման կայուն որակի ապահովում

Հ/Հ	Գործողություն	Ակնկալվող անմիջական արդյունք	Ակնկալվող ազդեցություն	Պատասխանատու մարմին(ներ)	Համակատարող մարմին(ներ)	Վերջնա-ժամկետ	Ֆինանսա-վորում
1.1	ՀՀ տարածքում աղբահավաքության միջոցառումների իրականացում	ՀՀ բոլոր տարածքներում՝ չսահմանված ու չնախատեսված տեղերում ու վայրերում, աղբավայրերից դուրս կուտակված աղբի հավաքման ու տարածքների մաքրման աշխատանքների իրականացմամբ՝ ՀՀ տարածքում սանիտարական մաքրության բարձր մակարդակի ապահովում:	Մարդու առողջության, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա վտանգավոր ազդեցությունների նվազեցում, զբոսաշրջության զարգացմանը խթանում ու բնակչության համար անվտանգ, առողջ կենսակերպի ու հարմարավետության ապահովում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ գործադիր մարմիններ, ՀՀ մարզպետարաններ, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ), Քաղաքացիական հասարակություն (համաձայնությամբ),	2021 թվականից շարունակական	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
1.2	Աղբահանության տեղական պլանների կազմման մեթոդաբանության մշակում	Յուրքաքանչյուր համայնքի համար աղբահանության պլանների կազմման համար մեթոդական աջակցություն և պլանների կազմման հնարավորություն	ՀՀ բնակավայրերում ինտեգրված աղբահանության համակարգ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ),, ՀՀ մարզպետարաններ	2021թ հուլիս	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
1.3	Աղբահանության սխեմաների մշակման մեթոդաբանության և կիրառելի համակարգչային մոդելի (GIS համակարգի կիրառմամբ) մշակում	ՀՀ բնակավայրերում գոյացող աղբի քանակի և բնակավայրերի աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ հանրապետության ողջ տարածքում աղբահանության	Հանրապետության տարածքում գոյացող աղբի պատշաճ հավաքում և փոխադրում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ ԲՏԱ նախարարություն, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ	2021թ. սեպտեմբեր	Օրենքով չարգելված այլաղբյուրներ

		«խելացի» սխեմաների ներդրման հնարավորություն					
1.4	Աղբահանության և թափոնների կառավարման ոլորտում գերատեսչությունների համագործակցության, ներառյալ վերահսկողության իրականացման բարելավմանն ուղղված միջոցների ձեռնարկում	Աղբահանության և թափոնների կառավարման ոլորտի բարելավմանն ուղղված համատեղ գործողությունների իրականացում, գործառույթների կրկնության բացառում	Գերատեսչությունների միջև տեղեկատվության պատշաճ հոսքերի ապահովում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2021թ. նոյեմբեր	Ֆինանսա-վորում չի պահանջում
1.5	Աղբի հավաքման և փոխադրման համար ներգրավվող կազմակերպությունների համար գործունեության պայմանների սահմանում	Աղբահանության համակարգում մասնագիտացված կարողություններով և տեխնիկական համապատասխան հագեցվածությամբ կազմակերպությունների ներգրավում	Աղբահանության մասնագիտացված և նորմերին համապատասխան ծառայությունների մատուցում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ արդարադատության նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ),	2022թ. փետրվար	Ֆինանսա-վորում չի պա-հանջվում
1.6	Շինարարական աղբի հավաքման, տեղափոխման և հեռացման և (կամ) օգտահանման ընթացակարգերի մշակում	Շինարարական աղբի առանձին հավաքում, տեղափոխում և առանձին հեռացում (կամ) օգտահանում	Շինարարական աղբի՝ որպես երկրորդային ռեսուրս օգտագործում, այդպիսով աղբավայրեր փոխադրվող աղբի ծավալների նվազեցում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Քաղաքաշինության կոմիտե, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ),	2022թ. ապրիլ	Ֆինանսա-վորում չի պահանջում
1.7	Աղբի ժամանակավոր պահման համար փոխաբեռնման կայանների շահագործման նորմերի սահմանում	Հանրապետությունում առկա նոսր բնակեցված, աշխարհագրական և ռելիեֆային տեղադիրքերով և ծախսարդյունավետությամբ պայմանավորված՝ աղբի ժամանակավոր կուտակման ենթակառուցվածքների ստեղծում	Աղբի հավաքման երթուղիների ծանրաբեռնվածու-թյան և ծախսերի նվազեցում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Քաղաքաշինության կոմիտե, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2022թ. ապրիլ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

1.8	Աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրային դաշտի բարելավում	Աղբահանության բարելավված ծառայություններ, պատասխանատվության և հսկողական գործիքների կիրառում	Աղբահանության պատշաճ ծառայությունների մատուցում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ արդարադատության նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ),	2022թ. հունիս	Ֆինանսա-վորում չի պ-ահանջվում
1.9	Խոշոր եզրաչափի աղբի (2 քմ և ավելի մակերեսով կենցաղային ու ոչ կենցաղային սարքավորումների, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի հենասարք, թափք, մետաղական ջարդոն, էլեկտրատեխնիկական սարքավորումներ , էլեկտրոնային թափոններ, կամ այլ նմանատիպ իրեր), հավաքման, տեղափոխման և օգտահանման և/կամ հեռացման համար ընթացակարգերի մշակում	Խոշոր եզրաչափերի աղբի առանձին հավաքում, տեղափոխում և հեռացում կամ օգտահանում (ուտիլիզացում)	Խոշոր եզրաչափի աղբի կանոնակարգված հավաքում, տեղափոխում և կրկնօգտագործում ու օգտահանում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ),	2022թ. հոկտեմբեր	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
1.10	Աղբահանության վարձավճարների հաշվարկման մեթոդաբանության մշակում	Աղբահանության սակագների մեջ աղբի գործածության հետ բոլոր գործառույթների ներառում, հավաքագրման համակարգի բարելավում	Աղբահանության ինքնածախսածածկման համակարգի ապահովում , ծախսարդյունավետության բարձրացում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ),	2023 թ. ապրիլ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
1.11	Բարձրահարկ բազմաբնակարան շենքերում աղբամուղերի արդիականացման կամ դրանց փակման ուղղությամբ առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Բարձրահարկ բազմաբնակարան շենքերում քաղաքաշինական, սանիտարական նորմերին համապատասխան աղբի հավաքում և հեռացում	Բազմաբնակարան շենքերում մարդու առողջության վրա վտանգների նվազեցում ու հարմարավետության ապահովում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Քաղաքաշինության կոմիտե ՀՀ առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարան	2023 թ. սեպտեմբեր	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
1.12	ՀՀ համայնքներում աղբահանության «խելացի» սխեմաների կիրառում	Յուրաքանչյուր համայնքի բնակչության թվով, տեղաբաշխվածությամբ և այլ աղբ առաջացնող	Հանրապետության տարածքում գոյացող աղբի պատշաճ հավաքում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ),	2023թ. նոյեմբեր	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		սուբյեկտներով (հանրային օբյեկտներ, մասնավոր ոլորտ, սպասարկման և ծառայությունների մատուցման կետեր և այլն), ինչպես նաև պատմամշակութային, զբոսաշրջային կենտրոնների առկայությամբ և աղբի առաջացման սեզոնային տատանումներով պայմանավորված՝ յուրաքանչյուր համայնքում ամրագրված աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրեր, դրանց տեսակներ և քանակ, աղբի հավաքման, փոխադրման և հեռացման երթուղիներ և ժամանակացույց			ՀՀ այլ համայնքներ (համաձայնությամբ)		
1.13	Աղբահանության համակարգի մշտադիտարկման համակարգի ներդրում	Հանրապետության տարածքում աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների ընդհանուր տեղեկատվական բազայի ստեղծում, որն իր մեջ կներառի աղբահանության բոլոր գործընթացների վերաբերյալ ընդգրկուն տեղեկատվություն. - գոյացում, - հավաքում - վերամշակում - հեռացում - վարձավճարներ և դրանց հավաքագրում) - քարտեզագրված ծառայություններ, - գույքագրված և քարտեզագրված աղբավայրեր	Հանրապետությունում աղբահանության համակարգի ամբողջական տեղեկատվության՝ հուսալի վիճակագրության առկայություն՝ (թափոնների հոսք, քանակ, դրույքաչափեր, վճարումների հոսք) և մշտադիտարկում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ համայնքներ (համաձայնությամբ),	2023թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

1.14	ՀՀ տարածքում աղբահանության համակարգի ուսումնասիրության և վերլուծությունների արդյունքներով՝ աղբահանության և կոշտ թափոնների կառավարման գործընթացների գոտիավորում	ՀՀ տարածքում ըստ աշխարհագրական, համապատասխան ենթակառուցվածքների առկայության, գոյացող թափոնների քանակի ու բաղադրության, աղբավայրերի և վերամշակման գործարանների տեղադիրքերի և սոցիալ-տնտեսական վերլուծությունների արդյունքներով ՀՀ աղբահանության համակարգի գոտիավորում և տարածաշրջանային օպերատորների ներգրավում:	Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման համակարգված և ինտեգրված համակարգի ստեղծում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե, Ներդրումների աջակցման կենտրոն (համաձայնությամբ), Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ (համաձայնությամբ)	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
1.15	Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ոլորտում ՊՄԳ և համայնք-մասնավոր գործընկերության գործիքակազմի կիրառմամբ մասնավոր ներդրողների ներգրավման նպատակով միջոցառումների իրականացում	Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման գործընթացների գոտիավորման միջոցառման արդյունքներով՝ հանրապետության տարածքում աղբի հեռացման և վերամշակման ինտեգրված հնարավոր համակարգի ներդրման համար մասնավոր ներդրողների ներգրավման նպատակով ՀՀ-ի համար ցածր ռիսկերով չափանիշների սահմանում, և ըստ այդմ մրցութային փաթեթների մշակում և իրագործում:	Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման համակարգված և ինտեգրված համակարգի կիրառում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն , ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, Ներդրումների աջակցման կենտրոն (համաձայնությամբ), Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), ՀՀ այլ համայնքներ (համաձայնությամբ)	1.14-րդ միջո-ցառումն իրա-կանացնելուց հետո	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

2. Աղբի հեռացման վայրեր

Նպատակ՝ Քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշներին համապատասխան աղբավայրերի ստեղծում
Խնդիր՝ Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա աղբավայրերի բացասական ազդեցությունների նվազեցում

2.1	Գործող աղբանոցների բարեկարգման և շահագործման համար քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նվազագույն նորմերի սահմանում	Աղբի պատշաճ հեռացման կազմակերպում: Հաշվի առնելով, որ ԵՄ կարգավորումներով աղբավայրերի ստեղծման, շահագործման ու փակման նորմերն ու պահանջները բավականին խիստ են ու ֆինանսական մեծ միջոցներ են պահանջում, առաջարկվում է սահմանել շրջակա միջավայրին և մարդու առողջության վրա նվազագույն բացասական ազդեցությունների մասով նորմերն ու պահանջները:	Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունների նվազեցում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Քաղաքաշինության կոմիտե, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	2021 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.2	Աղբավայրերի փակման նվազագույն նորմերի սահմանում	Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նվազեցում՝ դեպի մթնոլորտ արտանետումների և կեղտաջրերի ստորերկա ջրերի ներթափանցման նվազեցում և (կամ) բացառում	Տարածքների ազատում, բարեկարգում և վերադարձ հանրությանը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Քաղաքաշինության կոմիտե, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	2021 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.3	Հանրապետությունում առկա աղբանոցների գույքագրում և քարտեզագրում (տեղադիրք, մակերես, ծավալներ)	Գործող աղբանոցների ռեեստրի ստեղծում	Աղբավայրերի հետագա կառավարման քաղաքականության մշակման հիմքերի ստեղծում՝ վստահելի տվյալների ապահովման միջոցով	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ համայնքներ (համաձայնությամբ),	2023 թ. մայիս	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
2.4	Նոր աղբավայրերի նախագծման, շինարարության, շահագործման և մշտադիտարկման նորմերի սահմանում	Շրջակա միջավայրի վրա աղբի հեռացման վայրերի բացասական ազդեցությունների բացառում	Բնապահպանական և սանիտարահիգիենիկ նորմերին բավարարող աղբավայրերի համակարգի ներդրում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Քաղաքաշինության կոմիտե, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	2023 թ. սեպտեմբեր	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

2.5	Քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին չհամապատասխանող առնվազն 50 աղբանոցների փակում	Շրջակա միջավայրի վրա աղբանոցների բացասական ազդեցությունների նվազեցում	Մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունների նվազեցում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ մարզպետարաններ, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ),	2023թ. նոյեմբեր	ՀՀ պետական բյուջե, համայնքային բյուջեներ, օրենքով չարգելված այլ միջոցներ
2.6	Առնվազն երկու նոր սանիտարական աղբավայրերի կառուցում՝ Հրազդանում (այդ թվում՝ երկու փոխաբեռնման կայաններ Ակունք և Մարտունի համայքներում) և Երևանում	Շրջակա միջավայրի վրա աղբանոցների բացասական ազդեցությունների նվազեցում	Մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունների նվազեցում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Գեղարքունիքի և Կոտայքի մարզպետարաններ, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի համայնքներ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ),	2023թ. դեկտեմբեր	Դոնոր կազմակերպություններ, ՀՀ պետական բյուջե
3. Թափոնների կառավարման հինգաստիճան ստորակարգության կիրառում **Նպատակ՝** ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և ՀՀ-ԵՄ գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումների իրականացում **Խնդիր՝** աղբավայրերում տեղադրվող աղբի քանակի նվազեցում, աղբը որպես երկրորդային ռեսուրս օգտագործում							
3.1	«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարեու մասին» օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Օրենքով սահմանումների հստակեցում, հինգաստիճան ստորակարգության ամրագրում, սկզբնաղբյուրում տեսակավորման դրույթի ամրագրում, աղբի տեսակների համար առանձին կարգավորումների սահմանում, աղբի նվազեցման ու օգտահանման համար խթանիչ մեխանիզմների սահմանում	Աղբի հետ գործածության ոլորտում օրենսդրական հիմքերի ստեղծում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2021 թ. դեկտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջում
3.2	Աղբի բաղադրության ուսումնասիրության իրականացման համար մեթոդաբանության մշակում	Հանրապետությունում պարբերաբար աղբի բաղադրության	Գոյացող աղբի բաղադրության որոշում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն		2021 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված այլ միջոցներ

		ուսումնասիրության ապահովում					
3.3	Կենսաքայքայվող թափոնների օգտահանման և մշակման առաջարկությունների և ընթացակարգերի մշակում	Կենսաքայքայվող թափոնների առանձնացված հավաքում, փոխադրում և օգտահանում ու մշակում	Աղբավայր հեռացվող կենսաքայքայվող թափոնների քանակի նվազեցում և այնուհետև բացառում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2022 թ. հոկտեմբեր	Օրենքով չարգելված այլ միջոցներ
3.4	Թափոնների հիերարխիայի իրագործմանը նպաստող գործողությունների համար տնտեսական արտոնությունների կիրառման օրենսդրական հիմքերի ստեղծում	Սակավաթափոն արտադրության, թափոնների քանակի նվազեցման, դրանց օգտահանման, կրկնօգտագործման, վերամշակման գործընթացների խրախուսում և հիերարխիայի իրագործմամբ զբաղվող կազմակերպությունների հետաքրքրության բարձրացում	Թափոնների քանակի նվազեցում, աղբավայրերում վտանգավոր, ինչպես նաև կենսաքայքայվող թափոնների տեղադրման նվազեցում և կանխառգելում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023 թ. մայիս	Օրենքով չարգելված այլ միջոցներ
3.5	Թափոնների օգտահանման և վերամշակման գործընթացի և տեխնոլոգիաների, ինչպես նաև օգտահանված և վերամշակված արտադրանքների նորմերի, ստանդարտների և պահանջների սահմանում	Թափոնների վերամշակման և օգտահանման տեխնոլոգիաների, ինչպես նաև արտադրվող արտադրանքի համար էկոլոգիապես և մարդու առողջության վրա անվնաս պահանջների, նորմերի և ստանդարտների սահմանում:	Էկոլոգիապես անվնաս թափոնների օգտահանում և վերանշակում: Թափոնների վերամշակմամբ զբաղվող կազ-մակերպությունների գործունեության բնապահպանական և առողջապահական և աշխատանքի անվտանգության ապահովում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023 թ. հոկտեմբեր	Օրենքով չարգելված այլ միջոցներ
3.6	Արտադրողի ընդլայնված պատասխանատվության կիրառման նպատակով տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացում:	Արտադրողի ընդլայնված պատասխանատվության և «աղտոտողը վճարում է» սկզբունքի ու գործիքի կիրառման համար անհրաժեշտ ուսումնասիրության ապահովում	Աղբահանության համակարգում ծախսարդյունավետության ապահովում	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն , ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված այլ միջոցներ

3.7	Կենցաղային աղբի տեսակավորմանն ու վերամշակմանը և օգտահանմանն ուղղված միջոցառումների իրականացում	աղբը որպես երկրորդային ռեսուրս օգտագործում և աղբավայրում տեղադրվող աղբի քանակի նվազեցում	Թափոնների արդյունավետ կառավարում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ մարզպետարաններ, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ),	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված այլ միջոցներ
4. Հանրային իրազեկում **Նպատակ՝** աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման կայուն համակարգի ներդրում **Խնդիր՝** թափոնների տեսակավորման, պատշաճ կառավարման կարևորության վերաբերյալ հանրության լայն շրջանների իրազեկում							
4.1	Բնակչության տարբեր խավերի շրջանում, այդ թվում՝ կրթական հաստատություններում դասընթացների, կլոր սեղանների, գիտական կոնֆերանսների, աշխատաժողովների, հանրային քննարկումների կազմակերպում, այդ թվում՝ համագործակցելով միջազգային կրթական և ոլորտում գործող կառույցների հետ՝ :	Լայն հանրության շրջանում իրազեկվածության բարձրացում , Կրթական հաստատություններում բաց դռների անցկացում: Միջազգային կրթական հաստատություններում և ոլորտի առաջադեմ կառույցներում փորձի փոխանակման և վերապատրաստման անցկացում:	Տեսակավորման մշակույթի ներդրում և (կամ) տարածում լայն հանրության շրջանում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	2021 -2023թթ	Օրենքով չարգելված այլ միջոցներ
4.2	Իրազեկվածության բարձրացման միջոցառումների կազմակերպում	Տեղեկատվական նյութերի տարածում՝ բացիկների, բուկլետների տեսքով, էլեկտրոնային կայքերի, մամլո հաղորդագրությունների, սոցիալական մեդիայի՝ հարթակների միջոցով: Հաղորդակցային քարոզարշավների իրականացում: Միջազգային համագործակցություն և միջազգային առաջատար փորձի փոխանակում:	Աղբի հետ գործածության գործընթացների վերաբերյալ իրազեկվածության ապահովում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ),	2021 -2023թթ	Օրենքով չարգելված այլ միջոցներ

4.3	Հանրապետության կրթական համակարգում թափոնների կառավարման բոլոր բաղադրիչների ներառմամբ կրթական մոդուլների մշակում	Կրթական համակարգում ներգրավված անձանց բնապահպանական կրթություն	Գիտակից քաղաքացու ձևավորում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, կրթական հաստատություններ	2022թ. օգոստոս	Օրենքով չարգելված այլ միջոցներ
4.4	Ազգային, մարզային և համայնքային մակարդակով թափոնների կանխարգելման և կրճատման ծրագրերի մշակում և իրականացում	Լայն հանրության շրջանում իրազեկվածության բարձրացում	Աղբավայր հեռացվող թափոնների քանակի նվազեցում և այնուհետև բացառում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	2021 -2023թթ	Օրենքով չարգելված այլ միջոցներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

02.04.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ